№ 25. ՅՈՒԼԻՍԻ 8 (20) 1876 ՅՈՒԼԻՍԻ 8 (20) № 25.

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 5 ռուբլի, կէս տարվանը 3 ռուբլի։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Ծատուրեանի և Արասխանեանի խանութում։

Օտարազգաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ„

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ОДЕССА 9/81 VOH 15

ՄՇԱԿ

Լրագրի ԿԷՍ ՏԱՐՎԱՅ բաժանորդութեան գինը, յուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31 1876 թ. 3 ՌՈՒԲԼԻ է։ Գրվել կարելի է „ՄՇԱԿԻ“ խմբագրատան մէջ, պ. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ և նոյնպէս պ. ԱՐԱՍԽԱՆԵԱՆԻ խանութում։

Խմբագրութիւնը խնդրում է նոցա, որք դեռ չեն վճարել „ՄՇԱԿԻ“ ներկայ տարվայ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ, շուտով հասցնել նրան խմբագրութեանը։

Հասցէն՝ Тифлисъ, редакція армянск. газеты «Мшакъ».

ԲՈՎԱՆԴԱԿԱՈՒԹԻՒՆ

Այժմ կամ երբէք։—Ներքին տեսութիւն։ Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի մասին։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Սերբիա։ Նամակ Կ. Պոլսից։ Նամակ Էրզրումից։—Խառն լուրեր։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Արևելեան խնդիրը և հայերը Թիւրքիայում (վերջ)։

ԱՅԺՄ ԿԱՄ ԵՐԲԷՔ

Կրօնքը եղել է միշտ նոր կազմակերպվող կիսավայրենի դրութենից քաղաքակրթութեան ճանապարհը մտնող հասարակութիւնների համար գլխաւոր հասարակական բարոյական հիմք։ Եթէ կրօնքը ինքն բարոյական, հաստատ, անհատական, զարգացնող հիմքեր չունի,—և հասարակութիւնն էլ զուրկ է մնում իր զարգացման ընթացքում զօրեղ բարոյական և հաստատ-հասարակական հիմքերից....

Մահմետականութիւնը ոչ մի տեղ չէ նպաստել մի ազգութիւն բարոյապէս և քաղաքականապէս զարգանալու։ Այն ամեն ազգերը, որք մահմետականութիւն են ընդունել,—քաղաքականապէս զօրեղ չեն եղել կամ միայն կարճ ժամանակով քաղաքական ոյժ են ստացել և շուտով կրկին ընկել են և անհետացել, որպէս քաղաքական մարմիններ....

Ուրեմն այժմեան պատերազմը, այժմեան կռիւը Թիւրքիայի քրիստոնէութեան մահմետականութեան դէմ, ոչ թէ միայն ապրստամբված քրիստոնեայ ազգերի գոյութեան համար կռիւ է ճնշող մահմետական լուծի դէմ, բայց այդ պատերազմը ունի լայն, ընդհանուր, համայն-մարդկային նշանակութիւն՝—դա քաղաքակրթութեան կռիւ է բարբարոսութեան դէմ։

Այդ է պատճառը որ Թիւրքիահպատակ քրիստոնեաների շարժումը պէտք է հետաքրքրէ ամբողջ կրթված աշխարհը, Թիւրքիահպատակ քրիստոնեաների դրութիւնը պէտք է գրաւէ ամբողջ Եւրոպայի ուշադրութիւնը։

Այժմ, երբ ճնշված քրիստոնեաների մեծ մասը զէնքը ձեռին պաշտպանում են իրանց մարդկային իրաւունքները, անկողձութիւն կը լինէր Եւրոպայի կողմից Թողնել Թիւրքիային հպատակ քրիստոնեայ ազգերից մինը անպաշտպան՝ զոհ լինել մահմետականութեան, Թոյլ տալ կլանվել նրա ոչնչացնող տարրի մէջ.... Դա կը լինէր ոչ թէ միայն անկողձութիւն, բայց և հեռու ասիական երկիրներում քաղաքակրթութեան լոյսի տարածման անհրաժեշտութեան կողմից, վերջապէս գործնական կէտից՝ դա անիրաւութիւն կը լինէր....

Ցաւալի է երբ տեսնում ենք որ մի եւրոպական զօրեղ պետութիւն, Անգլիան, ընդունել է և պաշտպանում է այդ անկողձութեան, այդ անիրաւութեան քաղաքականութիւնը։

Մենք ասացինք մեր անցեալ համարում և կրկնում ենք որ Թիւրքիահպատակ հայերը իրանց թշուառ դրութենից դուրս գալու համար կարող են օգնութիւն սպասել, եթէ ոչ անպատճառ նիւթական, գոնէ բարոյական՝ միայն մի եւրոպական պետութենից, այն է Ռուսաստանից։

Միայն Ռուսաստանը կարող է հասկանալ որքան օգտաւէտ է թէ ընդհանուր մարդկային քաղաքակրթութեան կէտից, թէ իրան ռուսաց պետութեան օգուտների համար որքան նշանաւոր է շահել, գրաւել, կորած, ընկած, յուսահատված քրիստոնեայ տարրը Փոքր-Ասիայում։ Հայոց ազգը այդ երկիրներում հնդկա-եւրոպական ցեղի միակ ներկայացուցիչ է, ուրեմն և միակ ազգ է, որ ընդունակ է Փոքր-Ասիայում՝ տոկուն, աշխատասէր, տնտեսական զարգացման, բարոյական զարգացման։ դա միակ ազգ է որ այդ երկիրների մէջ կարող է միջնորդ դառնալ եւրոպական քաղաքակրթութիւնը մտցնելու և տարածելու համար....

Հայերին Փոքր-Ասիայում, Հայաստանում ապառնում է կատարեալ կորուստ։ Եթէ Թիւրքիան սլավօնական ցեղերի հետ պատերազմից յաղթող դուրս կը դայ,—հայերը կորած են. եթէ Թիւրքիան յաղթվի, եթէ ստիպված կը լինի Թողնել Եւրոպա և այդ վայրենի մնդօլական ցեղը կը դիմէ դէպի ասիական գաւառները,—հայերը նոյնպէս կորած են։ Հայերը Հայաստանում հետզհետէ անհետանում են և կանհետանան Թիւրքաց բռնաւոր տիրապետութեան տակ մասամբ կեանքի անտեսական անապահովութենից, հարստահարութենից, վատ կառավարութենից, սովից, հիւանդութիւններից, մասամբ իրանց մայրենի հողից անդադար գաղթելով, մասամբ վերջապէս կլանվելով մահմետական տարրի մէջ, նորա բռնի ազդեցութեան տակ անդադար իրանց կրօնքը փոխելով....

Այդ կրիտիկական րոպէում, երբ յայտվեցաւ բացարձակ պատերազմ քրիստոնէութեան և մահմետականութեան մէջ, երբ վերջապէս քրիստոնեայ տարրը կամենում է մահմետականութեան հետ իր բոլոր անցած հաշիւները դրստել—հայերի համար դա նոյնպէս մի վճռողական րոպէ պէտք է համարվի՝ այժմ, կամ երբէք....

Իսկ ի՞նչ է անում այդ ծանր, վճռողական րոպէում մեր հոգևորականութիւնը...ոչինչ.... Ինչպէս դարերով նա ոչ թէ միայն ոչինչ չէ արել, այլ մինչև անգամ իր շահերի համար աշխատել է հարստահարել, ճնշել քրիստոնեայ ամբոխի կեանքը, այնպէս էլ այժմ նա անշարժ նստած՝ անտարբեր նայում է քրիստոնեայ տարրից կրած անասելի մարտիրոսութիւններին։ Նրա աչքի տակ դարերով քրիստոնեաները մահմետականութենից հարստահարվում, բռնադատվում էին, նրանց կանայք ու աղջիկները բռնաբարվում էին, նրանց ունեցածը յափշտակվում էր, ամբողջ հայ գիւղերը մահմետականութիւն էին ընդունում...իսկ մեր հոգևորականութիւնը ոչ թէ միայն չը տարածեց քրիստոնէութիւնը, ոչ թէ միայն անընդունակ յայտնվեցաւ քրիստոնէութեան տարածող լինելու,—բայց և ունեցածն էլ հետզհետէ իր ձեռքից թողեց....Նրա գործունէութիւնը ուրեմն ոչ թէ միայն դրական չէր, բայց և բացասական էր։

Այժմ, կամ երբէք մեր հոգևորականութիւնը կարող է իր վարմունքով բարձրացնել իրան ժողովրդի աչքում, հասարակական կարծիքի առաջ մարքրել իրանից այսքան դարեր իր վրա կրած պատմական բիծը....Այսքան դարեր ժողովրդի քրտինքով վաստակած և վանքերին ընծայած կոպէկները որ այժմ ահագին գումարներ պէտք է դառնային, դիզվելով մեր վանքերի մէջ, ժողովուրդը իրաւունքով կարող է դնել մասամբ յետ պահանջել, գործ դնելով նրան մի մեծ, վսեմ գործի համար՝ քրիստոնեայ հայրենակիցների ազատութեան համար, մահմետականութեան ճնշող, բարբարոս, քաղաքակրթութեանը թշնամի, սարկացնող, մարդկային պատիւը ստորացնող լուծից....

Այդպիսով մեր հոգևորականութիւնը կը մաքրէր իրանից իր վրա եղած այն բոլոր պատմական բիծերը, որք մնում են նրա

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

(Շարունակութիւն և վերջ)

Երբ քրիստոնէութիւնը մուտք գործեց Հայաստան, նորա հետ և մտան հրէաների հոգու և բնաւորութեան յատուկ մտածելու և զգալու եղանակը։ Թէպէտ և հայերը ցեղով, լեզուով, բնաւորութեամբ, սովորութեամբ բոլորովին օտար էին հրէաներից, թէպէտ և իրանք հրէաները, ինչպէս և մինչև օրս, քրիստոնէութիւնը բացասում են, բայց այդ ամենը չարգելեց հայերին առանց խտրութեան, առանց կրիտիկայի, քրիստոնէութեան հետ ընդունել և հրէականութիւնը իր տխուր հետևանքներով։ Հետևելու եռանդը և սէրը այնչափ կուրացրել էր հայերին, որ ամենքը մրդում էին ամենայն կերպ հրէից նմանվելու.—հայերի իդէալը հրէականութիւնն էր։ Մինչև անգամ հայերի մէջ սովորութիւն դառաւ, իրանց նախնեաց մարդավարի անունների տեղ՝ հրէական անուններ դործածելը։ Այո, մեր սուրբ նախարարք երևի հրէից մարգարէներին բոլորովին նմանվելու համար, իրանք էլ նոցա պէս մին մին անգամ ժողովուրդի վերա անէծք էին կարդում։ Մինչև օրս էլ ժողովուրդի մէջ կարծվում է, որ հրէից ազգը ամենից հին է, որ հայերը նոցանից են ցեղված—չը գիտենք ինչ հիմանց վերա։ Ցայտնի բան է, որ մի ծուռ միտք կամ սխալ հասկացած գաղափար աւելի վնասակար և տևողական է իւր հետևանքներում, քան թէ սուրը, կրակը և ժանտախտը։ Ինչ էր և ինչ է հրէից ազգը, որ նորան հետևողը ինչ լինի։ Իսրայէլի ժողովուրդը հնուց յայտնի է, որպէս միշտ ծոյլ, թոյլ, ամբարիշտ, անհանգիստ, անգոհ իր վիճակից։ Այնչափ եսական էր մի և նոյն ժամանակը, որ իրան միայն համարում էր Աստուածանից ընտրած ժողովուրդ, և Աստուածանից պահանջում էր որ իրան համար յաղթութիւններ անէ, այո, իրան այնպիսի մի երկիր առաջնորդէ, որտեղից կաթն ու մեղր է բխում։ Բայց Իսրայէլի ժողովուրդը մինչև օրս ինչ կաթն ու մեղր է վայելում, մենք գիտենք։ Աստուած ոչ ոքին չէ օգնում, եթէ նա ինքն իրան օգնել չը գիտէ։

Իսրայէլի ժողովուրդը այնչափ ապերախտ էր իւր բարերարների դէմ և նեղ օրերում այնչափ փոքրահոգի, որ իւր մէջ ծնուած համարեա թէ ամեն հանճար, ամեն մեծ մարդ, մարդարէ ղըղվում էր իւր ազգից և անէծք էր կարդում նորա վերա... Իսրայէլ, Իսրայէլ, ինչ կը լիներ, որ մենք քեզ չը տեսնէինք...

Թէպէտ և ճշմարիտ է, որ հայերը ներկայ թշուառ վիճակին հասել են պատմական, քաղաքական, կրօնական, աշխարհագրական և ուրիշ պատճառներից. եթէ այժմս հայերը աւելի բարձր չեն կանգնած իրանց զարգացմունքովը միւս քրիստոնեայ ազգերից արևելքումը, ստոր էլ չեն։ Ուրեմն ինչիցն է, ինչ է բուն, հիմնական պատճառը, որ մինչև օրս ոչ մի քաղաքական, ազգային շարժմունք չենք նկատում հայերի մէջ Թիւրքիայում, որը միշտ կրկնում է միւս քրիստոնեաների մէջ։ Պատածող հայը, տարակոյս չը կայ այդ հարցը իրեն կառաջարկէ։ Այս հարցը անչափ նշանաւոր ու հետաքրքիր է ամեն հայի համար. սորա պատասխանը պէտք է հիմնաւոր և գիտական կերպով աշխատասիրած։—Մեր միտքը կարող չէ լինել այդ այժմս էլ անել, և այն ես մի լրագրի էջերում։ Մենք միայն կաշխատենք մի քանի խօսքով յայտնել մեր գլխաւոր մտքերը այս մասին, որոնք, մեր կարծիքով պիտի յիշեալ պատասխանի հիմքը կազմեն։ Մենք մեր նպատակին հասած կը լինենք, եթէ կարողացանք սորանով այն ամեն ազնիւ հայերի ուշադրութիւնը դարձնել այդ հարցի վերա, որոնց սրտերը դեռ բաբախում են ազգային լուսաւորութեան գործի համար և հայրենեաց սիրոյ եռանդով դեռ վառված են։

Մի ազգ է անհատների գումարը։ Սորանից կազմվում է հասարակութիւնը և հասարակութեան զանազան դասերը։—Ուզում ենք մի ազգ իբրև մի ամբողջութիւն ճանաչել, ուսումնասիրել նորա ոգին, բնաւորութիւնը, ծանօթանալ նորա գործունէութեան, զարգացման, յառաջադիմութեան և յետադիմութեան աստիճանների հետ,—պէտք է առաջ սկսենք նոյն ազգի մէջ գոյացած հասարակութեան դասերը մի առ մի ուսումնասիրել։ Քանի և ինչ տեսակ դասերից է կազմուած ազգը. ինչպէս է նոցա օրական և մտաւոր կեանքը հոսում. ինչ ձգտումներ ունեն. ինչ մտքերի են ծառայում և ինչ նպատակների են դիմում.... Այս ամենը մի առ մի լաւ քննելուց յետոյ միայն կարելի է ուղիղ գաղափար ստանալ նոյն ազգի մասին և ապագայի համար մի վճիռ կազմել։

Հայ ազգի մէջ երկու դասեր կան, որոնք նշանաւոր են, միւսները կամ չը կան, և եթէ կան, խիստ աննշան են, ձայն չունեն։ Այս երկու դասեր են՝ առևտրական (բուրժուա) և հոգևորական (կղերական) դասերը։—Կալուածատէրերը, իբրև դաս մանաւոր տեղ չեն բռնում, չը կան. դորանից կը կազմուէր արիստոկրատիան։ Հին ժամանակներում հայոց արիստոկրատիան արևելքում առաջինն էր իւր կազմակերպութեամբ և ուժով։ Արհեստաւորների դասը չնչին է և իբրև մի մասնաւոր դաս, ազգային գործքում նշանակութիւն չունի։ Երկրագործական, ուրեմն գիւղացիների դասը, բոլորովին ձայն չունի ազգային գործքում, նորա ձայնը կտրած է, նա ծառայում է իբրև առարկայ երկու վերոյիշեալ դասերի ինտերէսներին։

Հայոց ազգի վերա խօսելով, ունենք մեր առջևը երկու առաջնորդող դասեր միայն. առևտրական և հոգևորական դասերը։ Այս երկուսի ձեռին են ազգային, ազգութեան բոլոր գործքերը։ Ազգի յառաջադիմութիւնը, յետադիմութիւնը, ազգին լաւն ու վատը, բարին և չարը.... բոլորը սոցանից է կախուած, ուղղակի սոցանից կախումն ունի։ Ինչ ենք տեսնում այս երկու դասերի մէջ։

Հոգևորականութիւնը հեռու մեր նախահարց հիմնած առաքելական սուրբ եկեղեցու սկզբունքներից, օտար և թափուր ամեն բարձր, վսեմ մտքերից, նպատակներից, ծառայում է միայն իւր նիւթական շահերին և իւր բարքով ու վարքով դայթակղեցնում է ժողովուրդին։ Հոգևորականութեան համար եկեղեցին փոխանակ նպատակ լինելու, միջոց է իւր ծակ աչքը կշտացնելու։

Առևտրական դասը *) ղուրկ մարդկային ամեն ազնիւ մտքերից և զգացմունքներից, ցանկանում է

*) Մենք գիտենք, որ կան առաքինի հոգևորականներ, որոնք իրենց պարտաւորութիւնը լաւ

խղճմտանքի վրա ծանր բեռի պէս, նա կը մաքրվէր իր անցեալի ընթացքից, իր դէմ արդարացի կերպով ուղղված մեղադրանքներից և նախատինքներից...

Սորանից ի՞նչ աւելի վսեմ տեսարան կարող էր լինել՝ Քրիստոսի եկեղեցի աղատումէ ստրկութեան մէջ տանջվող քրիստոնեաներին, բարեպաշտ ազգից եկեղեցուն դարերով ընծայված զումարներով...

Կամ զուցէ այդ զումարները այլ ևս չը կան՝ վանքերում, նրանք կորած են, անհետացած են.... Գուցէ ժողովրդի քրտինքով վաստակած, դարերով հաւաքված ահագին զումարները արդէն կերած, վատնած են մեր վանքերից...

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

Վերջին ժամանակները, ինչպէս լաւ գիտենք, յարուցվեցաւ հայոց թէ մանկավարժական, թէ լրագրական շրջաններում Ներսիսեան դպրոցի վերաբերութեամբ հետևեալ հարցը՝ փակել այդ դպրոցի ստորին դասարանները և նրանց փոխանակ բաց անել դպրոցի մէջ վեցերորդ, եօթներորդ և մինչև անգամ ութերորդ վերին դասատները, մասնագիտական ուղղութեամբ, այնպէս որ դպրոցը կարող էր պատրաստել աւելի հասուն աշակերտներին: Համարելով այդ տեսակ ձգտումները առ այժմ տարաժամ, մենք կարծում ենք եթէ այդ մտքերը իրագործվեն, նոքա կարող են միայն վնասակար լինել: Եթէ մինչև անգամ առերես հայեացք գցենք Ներսիսեան դպրոցի դրութեան վրա, մենք կը նկատենք որ այդ ուսումնարանի ստորին դասատները լի են աշակերտներով, այն ինչ վերին դասատները համեմատաբար շատ քիչ աշակերտներ ունեն, այնպէս որ այս տարի դպրոցից դուրս եկան միայն չորս աւարտածներ: Եթէ միւս տարի էլ աւարտածների թիւը աւելի նշանաւոր կը լինի, այնուամենայնիւ այդ թիւը միշտ անշան կը լինի համեմատելով աշակերտների այն բազմութեան հետ, որ լցնում է ստորին դասատները: Այդ երևոյթը պարզ ցոյց է տալիս մեր հասարակութեան մէջ սկզբնական, տարրական ուսման պահանջը: Մեզ կարող են պատասխանել որ եթէ այս տարի շատ քիչ աւարտածներ կային, պատճառը նրանումն է որ անցեալ տարի չորրորդ դասատան մէջ պատահած անկարգութիւնների պատճառով մի քանի հոգի աշակերտներից արձակվեցան: Բայց երբ որ անկարգութիւնները չէին էլ պատահում, ամեն տարի ուսում աւարտածների թիւը Ներսիսեան դպրոցում քիչով աւելի էր ներկայ տարվայ աւարտածների թուից և բացի սորանից ոչ ոք չէ կարող երաշխաւոր լինել որ յիշեալ անկարգութիւնների երևոյթը նորից չէ կրկնվի, քանի որ դպրոցը մանկավարժական կողմից կը գտնվի այժմեան դրութեան պէս անորոշ դրութեան մէջ: Չը կայ ոչինչ որոշ՝ ոչ ուսումնական պրոգրամայ, ոչ մանկավարժական ուղղութիւն և կանոններ... իսկ այդ տեսակ դրութեան մէջ անկարգութիւնները միշտ կարող են կրկնվել...

Ստորին դասատների աշակերտներով լի լինելու, և բարձր դասատների մէջ աշակերտների սակաւութեան պատճառները մեր կարծիքով սրանք են՝ Ա.) Դպրոցի աշակերտները մեծ մասամբ պատկանում են հասարակական այն դասակարգին, որին ընդհանրապէս անուանում են հասարակութեան ստորին դասակարգ՝ այդտեղ մտնում են արվեստաւորների, մանր վաճառականների, գիւղական բնակիչների, գիւղական և քաղաքային քահանաների որդիները: Այդ երեխաների ծնողները չեն ձգտում իրանց որդիներին բարձր ուսում տալու, նրանցից գիտնականներ դարձնելու, և չեն էլ կարող, եթէ ցանկանային էլ, նիւթապէս այնքան ապահոված չը լինելով: Նրանք միջոց չունեն երկար սպասել մինչև որ երեխաները դպրոցից դուրս գան, նրանց հարկաւոր են աշխատողներ, տան մէջ օգնականներ,—իսկ սորա համար բաւական է եթէ երեխան ընդհանուր տարրական ուսում ստացած է: Բ) Ստորին դասատների և ծխական ուսումնարանների վրա կազմակերպութիւնը, որի պատճառով երեխաները 2—3 տարի նստելով մի և նոյն դասատան մէջ, չեն հասնում մինչև վերին դասատները և ստիպված են թողնել դպրոցը ուսում չաւարտած:

Կրկնում ենք՝ ամենից շատ ցանկալի է այժմ որ Ներսիսեան դպրոցը տար իր աշակերտներին ընդհանուր տարրական կրթութիւն, մի ամփոփ, ամբողջ տարրական զարգացումն: Երևի ամենքը, ովքեր որ ծանօթ են Ներսիսեան դպրոցի հետ, կը համաձայնվեն մեզ հետ, որ մինչև այժմ նշոյլ էլ չը կայ այդ տեսակ կրթութեան, որ այդ դպրոցի աշակերտները առհասարակ շատ քիչ զարգացած են: Իսկ ինչպէս կարող է աջողվել մասնագիտական կրթութիւն, երբ պակաս է զարգացումը և ընդհանուր կրթութիւնը:

Բացի սորանից մասնագիտական ուսումը ոչինչ նշանակութիւն չունի մի հասարակութեան համար, եթէ դուրս եկած մասնագէտները ուսում աւարտելուց յետոյ, գործադրութիւն չեն գտնի կեանքի մէջ: Մենք ասացինք որ ծնողների մեծ մասը չեն կարող, միջոց չունեն սպասել մինչև որ որդին կը հասնէ չորրորդ կամ հինգերորդ դասատան, ուր մնայ որ ծնողը սպասի որ որդին անցնէ վեցերորդ, եօթներորդ կամ ութերորդ դասատները, երբ որ նա գիտէ թէ ինչքան էլ ուսումը շարունակէ Ներսիսեան դպրոցում, էլի կեանքին չէ կարող գործ դնել իր գիտեցածը: Ուրիշ բան է եթէ լիներ մի ուսուցչական դպրոց, կամ նոյն Ներսիսեան դպրոցը դառնար ուսուցչական դպրոց.... այն ժամանակ աղքատ ծնողները կը սպասէին ինչքան կամենում էք, գիտենալով որ որդին ստիպենդիայով (օրինաւոր, կատարեալ ստիպենդիայով և ոչ թէ 7 կամ 10 մանէթով ամսական) ուսում առնելուց յետոյ, կը գտնի մի որ և իցէ գիւղական կամ քաղաքային ժողովրդական ուսումնարանի մէջ վարժապետի տեղ և այդ տեղը նրան ճարելու համար ստիպված կը լինի հոգալ ինքն դպրոցը, որ նրա ուսման վրա ստիպենդիայի նշանաւոր գումար է ծախսարել:

Իսկ այն պարոնների կարծիքը, որք առաջարկում են վերցնել Ներսիսեան դպրոցում ստորին դասատները այն պատճառով, որ իբր թէ այժմ մեր ծխականները բաւական կազմակերպվում են և կարգի են ընկնում, այնպէս որ ընդունակ կը լինեն ներկայացնել զարգացած և պատրաստ երեխաներին միջնակարգ դպրոցին,—այդ կարծիքը մեզ բոլորովին անհիմն է երևում: Նախ պէտք է ասել, որ ծխականների թիւը շատ սահմանափակ է և անբաւականացուցիչ, այնպէս որ իւրաքանչիւր տարի նրանց մէջ մտնելու ցանկացող բազմաթիւ երեխաների մեծ մասը մերժում են ընդունել՝ տեղի պակասութեան պատճառով: Այդ չընդունված երեխաները ստիպված են թափառել ուսումնարանից ուսումնարան և վերջը մտնում են մի որ և է ինքնակոչ տիրացու մանկավարժի մօտ, որի էժան դասատուութեան ազդեցութեան տակ սովորապէս բթանում են: Ոմանք էլ այդ հասարակութեան ստորին դասի երեխաներից մտնում են այնպիսի ուսումնարաններ, որք իրանց ուղղութեամբ և կազմակերպութեամբ բարձր են և ուրեմն անյարմար նոցա շրջանի պահանջներին: Իսկ ինչ որ վերաբերում է մեր ծխական ուսումնարաններին, նրանց դրութիւնը շատ անմխիթար է և նրանց կարգի դցելու համար քիչ ժամանակ չի պահանջվի: Բացի սորանից նրանց դրութիւնը հաստատ չէ, որովհետև նրանք ապահոված չեն նիւթական կողմից, իսկ մանկավարժական կողմից շատ անորոշ ուղղութիւն ունեն: Եւ ինչպէս կարող են մեր ծխականները ուսումնական կողմից լաւ դրութեան մէջ լինել, երբ որ ամբողջ ձմեռվայ ընթացքում դասատուութեան ժամանակ սենեակները չեն տաքացնում, վառարաններ չունենալու պատճառով, իսկ որտեղ կան էլ վառարանները, նրանց վառելու ժամանակ ծուխը տարածվում է սենեակում և աշակերտների ու վարժապետի աչքեր է կծում... Այդ տեսակ հանգամանքներում էլ ի՞նչ պարապմունք հնարաւոր է, էլ ի՞նչ առաջադիմութիւն սպասելի է... Վերջապէս յայտնի է որ ծխականների մէջ վարժապետները ստանում են շատ շատ 30 կոպէկ դասական՝ միթէ հնարաւոր է լաւ վարժապետ գտնել այդ տեսակ ողորմելի գնով: Եւ եթէ ընդունակ վարժապետ գտնվի, միայն քաղցը կարող է նրան ստիպել ընդունել այդ տեսակ պաշտօն... դա կատարեալ և ապարդիւն մարտիրոսութիւն է:

Ուրեմն նախ և առաջ կազմակերպեցէք այդ ուսումնարանները, ապահովացրէք նրանց նիւթապէս, հաստատ ուղղութիւն տուեցէք նրանց մանկավարժական կողմից, կրկնապատկեցէք նրանց թիւը,—և այնուհետև միայն յարուցէք Ներսիսեան դպրոցի ստորին դասատների փակելու կամ չը փակելու հարցը: Յայտնի է նոյնպէս որ ծխական դպրոցները գտնվում են թեմական վերատեսչի հսկողութեան տակ: Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը չէ խառնվում նրանց գործերի մէջ: Մենք կարծում ենք որ հոգաբարձութիւնը կանոնադրութեամբ ունի իրաւունք և պէտք է հսկողութիւն ունենայ դրանց վրա, որովհետև նրանից է կախված Ներսիսեան դպրոցի պրոգրամի սահմանելը, իսկ ծխական դպրոցները պէտք է նպատակ ունենան պատրաստել աշակերտներին այդ միջնակարգ դպրոցը մտնելու համար:

Այդ ուսումնարանների վրա հմուտ մարդկանց բարեխիղճ կօնտրոլի ժամանակ, կարելի է յուսալ որ Ներսիսեան դպրոցի մէջ կը մտնեն աշակերտները այդ դպրոցի մշակված պրոգրամային համեմատ պատրաստված և ուրեմն գործը այդպիսով աւելի լաւ կընթանայ:

Զևակերպում ենք մեր ասածը՝ Ներսիսեան դպրոցը կարող է առ այժմ օգտաւէտ լինել միմիայն որպէս միջնակարգ դպրոց, որի համար հարկաւոր է թէ ծխական ուսումնարանների, թէ Ներսիսեան դպրոցի ստորին դասատների բարեկարգ և յարմար կազմակերպութիւնը: Այդ է պահանջում ինքն հասարակութիւնը: Իսկ մասնագիտական կրթութեան, այսինքն քահանաներ և վարժապետներ պատրաստելու համար, հակաւոր է որոնել և գտնել առանձին գումարներ՝ կամ առանձին վարժապետանոց, կամ նոյն իսկ Ներսիսեան դպրոցի մէջ մասնագիտական կուրսեր բաց անելու համար: Դորա համար, կրկնում ենք, հարկաւոր են առանձին միջոցներ ստիպենդիաներ պահելու համար, իսկ առանց օրինաւոր ստիպենդիայի, առանց ստիպենդիաներ պահելու, երբէք չենք ունենայ ուսուցիչներին: Բայց վարժապետներ պատրաստելու նպատակը չը պէտք է արգելէ Ներսիսեան դպրոցի նպատակին՝ լինել մի կազմակերպված միջնակարգ դպրոց, իր լաւ կազմակերպված ստորին դասատներով, չը պէտք է արգելէ նրան տալ իր աշակերտներին ընդհանուր գործնական կրթութիւն:

Ուրիշ բան է եթէ Ներսիսեան դպրոցը մասնագիտական ուսուցչական դպրոց կը դառնայ,—իսկ եթէ նա պէտք է մնայ միայն միջնակարգ դպրոց՝ նրա ստորին դասատները չեն կարող վերցրած լինել, և այդ տեսակ հանգամանքում բարձր դասատները առանց ստորին դասատների,—ժամանակի իզուր կորուստ է աշակերտի համար:

Մեզ կասեն՝ բայց այդ բարձր դասատները մասնագիտական վարժապետանոցի ուղղութիւն կունենան:—Իսկ մենք կը պատասխանենք՝ ուսուցչական մասնագիտութեան պատրաստվելը հայ երիտասարդների համար,

---

չքեղ ապրել, ուտել և ըմպել: Որովհետև նա կարծում է, որ մարդս միայն ուտելու համար է ստեղծուած, լաւ գիտէ, որ փողի միջոցով միայն կարելի է այդ անել: Ուստի այդ երկրորդական ցանկութիւնը, որ է փող ձեռք բերելը, այնչափ քաղցրացել է նորա համար, որ բուն նպատակը մոռացած, միջոցը դառել է նորա համար նպատակ: Նորա համար ուրիշ ոչինչ չը կայ աշխարհումս, նա աշխատում է շուտ և ինչ միջոցով և լինի փող, հարստութիւն դիզել—այդ հաւաքումն է կայանում նորա նպատակը:—Առևտրական դասի համար վաճառականութիւնը փոխանակ միջոց լինելու, է նպատակ:

Երկու դասերն էլ ծոյլ են, երկուսն էլ ուզում են հեշտ, թէթև, առանց աշխատանքի, այսպէս ասենք, ուրիշի հաշուովն ապրել:

Բնականապէս առևտրականները կարող չեն միմեանց մօտ ապրել և միմեանցից շահուել, ուրեմն պէտք է հեռանան, ցրուեն, հեռու աշխարհներ թափառեն, օտար ազգերի մէջ մտնեն, որ կարողանան իրանց նպատակին հասնել:

Հոգևորականներն էլ կախված լինելով առաջիններից, պէտք է նոցա հետևեն, որտեղ որ նոքա են, իրանք էլ այնտեղ լինեն, որ կարողանան ապրել: Երկուսն էլ կրում են իրանց դրօշակի վրա հետևեալ խօսքերը՝—որտեղ փորս կուշտ է, այնտեղ է իմ հայրենիքս:

Երկուսն էլ իրանց գործունէութեամբ և նպատակներով բացասում են ազգութեան միտքը,

---

հասկանում են, նոյնպէս կան ազնիւ առևտրականներ, որոնք սիրով ազգային գործին ամեն բան կը զոհեն, բայց մեր խօսքը ընդհանուրին է վերաբերում: Ծ. Հ.

հայրենիքը: Երկուսն էլ իրանց ուշքը, միտքը դարձրած բոլորովին արտաքին, նիւթական բարիքների վերա, բոլորովին անուշադիր և անզարգացած են թողել հոգեկան և մտաւոր կարողութիւնները: Մենք տեսնում ենք, որ այս երկու դասերը դրսից զանազանվում են միմեանցից, բայց ներքուստ շատ նմանանում են միմեանց:

Այսպէս հայը մէջքը դարձրած Մասիսին, աշխարհիս ամեն կողմերը ցրուում է, նորա համար ազգութիւն, հայրենիք, մարդկային, կամ անձնական իրաւունքներ, պարտաւորութիւններ, պատուազգասութիւն, ազնիւ հպարտութիւն... չը կան. նա այդ ամենի համար անզգաստ է: Ինչ որ ուզում են, թող անեն, միայն առևտրականից փողը չը խլեն և հոգևորականից գտաղանը: Ազգին միւս մասն էլ հետևում է սոցա: Երկրագործը թողնում է իւր ազնիւ պարապմունքը և գնում է օտարութիւն, հեշտ ու թեթև հարստանալու համար:

Մի ազգի առաջնորդող և գործող դասերը թէ այսպէս են, մի ազգ որ սոցա հոգւով և մտքով է միրտուած, ինչ զարմանք, որ թոյլ, երկչոտ և ամարդ է: Ինչ զարմանք, որ ոչինչ քաղաքական, ազգային կենաց նշոյլ չէ ցոյց տալիս, այլ ամեն մէկ քուրդի, թուլամորթ պարսկի, դատարկապորտ թուրքի առջևը կռանում է, վիզը կախ է գցում:

Մեզ կասեն, եկեղեցին է, որ ազգութիւնը պահպանում է: Այդ էր, հիմայ չը կայ: Հիմայ եկեղեցին չէ կարողանում մինչև անգամ հաւատը ժողովրդի մէջ պահպանել: Եթէ ազգութիւնը, հայոց լեզուն մի կերպով հոգևորականութիւնից պահպանուել է, այդ ոչ թէ եղել է իբրև նպատակ, այլ միջոց հոգևորականութեան ինտերէսների համար:

Արդարև, եթէ դորանից հայերէն լեզուն, գրաբարը խլեն, էլ ինչ կը մնայ նորան, երբ ինքը, ինչպէս վերը ասեցինք, իւր բուն կոչումից, նպատակներից հեռացել է: Այդ է բուն պատճառը, որ մինչև վերջումս հոգևորականութիւնը գրաբար լեզուն պլնդ էր բռնում և աշխարհաբարին ընդդիմանում էր: Այս մտքով միայն ազգութեան ու լեզուի պաշտպանութիւն գտնելով հոգևորականութեան մէջ, մինչև օրս էլ ժողովրդեան մէջ ընդհանուր կարծիքը կայ, որ հայերէն կարող է լինել միայն աղօթքների լեզու, և առևտրական դասի առջևը՝ քաղցած, ազդասէր և տիրացու բառերը հասմանչան են: Ուրեմն երիտասարդ ուսեալները թող չը զարմանան, երբ առևտրականը դժուարանում է հայերէն խմբագրած լրագրին գինը վճարելու: Այդ չատ պարզ բան է. հայը մտածում է, որ նէխարքը եկեղեցում ձրի է ստանում և դանձանակ գցելը կախուած է իւր ազատ կամքից, նա կարծում է, որ հայերէն խմբագրած լրագիրն էլ եկեղեցուն է պատկանում, ուրեմն նորա վճարելն էլ իւր կամքիցն է կախուած:

Ինչ կարող ենք և ինչ իրաւունք ունենք լաւը սպասելու մի ազգից, որի գործքը յիշեալ երկու դասերի ձեռներումն է, որի առաջնորդները սոքա են: Բացի ազգի քարոզքանդ լինելուց, ուրիշ բան սպասելը ցնորք, իլուզիա է: Սոցա շնորհիւը մեր ազգի մէջ միայն այն ժամանակն է կեանք երևում, երբ նորա մէջ յարուցանում է կրօնքի, հաւատի խնդիրը կամ լաւ ևս ասել, երբ այդ երկու դասերը միմեանց հետ անհամաձայն են և կռուում են միմեանց դէմ ունեցած իրաւունքների և պարտաւորութիւնների մասին:

Ազգային գործքը առաջ տանելու, թշուառ հայերին Թիւրքիայում մահմետական բռնութենից ազատելու, դաղթականութեան ընդդիմանալու, հոգևորական, մանաւանդ առևտրական դասի ազդակործան ձգտումներից փարատելու, և այսպէս հայ ազգը պատրաստելու իբրև մի առողջ և պիտանի անդամ մարդկութեան, կամ մի որ և իցէ պետութեան մէջ,—հարկաւոր է հիմնաւոր փոփոխութիւններ: Եկեղեցին պէտք է յետ դառնայ իւր առաջուայ պարզ և սուրբ սկզբունքներին, իւր մէջից հեռացնէ ամեն անպէտք և վնասակար անդամներին: Եկեղեցին պէտք է լինի հոգևորականների համար նպատակ, ոչ թէ միջոց: Առևտրական դասը պէտք է բոլորովին սահմանափակուի և հայերի համար առուտուրը լինի միջոց, ոչ թէ նպատակ կեանքի:

Այս ամենը կարելի է իրագործել, երբ ճշմարիտ և տարրական կրթութիւն մտցնուի ժողովրդեան մէջ, երբ կաղմուի և զարգանայ երկրագործների, կալուածատէրերի և արհեստաւորների դասերը, որոց վերա կը հիմնուի և կը գտնէ իւր ուժեղ նեցուկը գիտական, ուսումնական դասը: Մենք հաւատացած ենք, որ ամեն ազնիւ հայ, լինէր նա հոգևորական, առևտրական,—սիրով կը համաձայնուէ մեզ հետ: Ինչ որ յիշեալ երկու դասերը ազգի համար գործեցին, գիտենք, ժամանակ է որ դոքա իրանց հրաժարականը տան և միւս դասերին թողնեն գործելու: Մենք մերը ասացինք. մէկ խօսք էլ աւելացնենք: Թէպէտ և գիտութիւնը աշխատում է օդանաւութիւնը կատարելագործելու, բայց ազգերը դեռ օդում չեն ապրում: Թող գիտենան հայերը, որ պէտք է ամենից առաջ մի ազգ իւր ոտքի տակը ունենայ—հող:

Դոկտոր Սպանդարեան

որոնք իրանց ամբողջ կեանքը պէտք է նուիրեն կամ քաղաքային, կամ զիւղական ժողովրդական ուսումնարանների մէջ ուսուցչութեանը, աներևակայելի է առանց հաստատ և առատ ստիպիտղիաների, և սորա համար բաւական չէ մէկ երկու ստորին դասատների վերցնելուց յետոյ խնայած փողը, այլ հարկաւոր է սորա համար ամբողջ Ներսիսեան դպրոցի տարեկան եկամուտը, գոնէ 20,000 ռուբլ գումարը։

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, յունիսի 25

Ես ուրախութեամբ կարդացի ձեր լրագրի № 23 մէջ աւետարանի մասին յօդուածը, և պէտք է ասեմ որ նրա մէջ յայտնած պարզ մտքերը շատերի մէջ ծնվեցան, երբ իմացան աւետարանի վրաց լեզուով թարգմանելու մասին։

Հաւատացէք ինձ, երբ որ Թիֆլիսից ոչ հեռու գտնվող մեր զիւղական ուսումնարանի վարժապետ Բ.... ընծայ ստացաւ մի քանի տաս հատ վրացերէն աւետարանի,—իմ մէջ ծնվեցան երկու միմանց հակառակ զգացմունքներ՝ ուրախութիւն և ցաւ։

Աչքի առաջ ունենալով մեր զիւղական ուսումնարանի տանմանափակ նիւթական միջոցներ, ես չէի կարող իմ բաւականութիւնը չը յայտնել այն մի քանի անգամ արդէն Մէլիքովի տպարանի կողմից դէպի մեր ուսումնարանը ցոյց տուած ուշադրութեան վերաբերութեամբ, որի նորհով ուսումնարանը ձեռք է բերում իրան բոլոր հարկաւոր գրքեր։ Ես չէի կարող իմ սրտում չը համակրել առհասարակ վրացիների այն զովելի ձգտման, որով նոքա աշխատում են լոյս ընծայել անասելի էժան գներով ժողովրդական ընթերցանութեան համար գրքեր, մասամբ վաճառելով այդ գրքերը, մասամբ տարածելով նրանց ժողովրդի մէջ անվարձ։

Վերջին ընծայաբերութիւնը, որի մասին ուրախութեամբ յայտնեց ինձ մեր վարժապետը, հաստատեց ինձ որքան մենք հայերս, վրացիների հետ համեմատելով, անհոգ ենք վերաբերվում դէպի ժողովրդական կրթութեան գործը։ Վրացիները անընդունակ, ծոյլ, անհոգ են,—ասվում էր շատ անգամ,—իսկ իրականութեան մէջ յայտնվում է ընդհակառակն, թէ նրանք մեզանից, quasi-գործունեայ հայերից առաջ գնացին, և այդպիսով ոչ թէ միայն իրանց սեփական գործը առաջ մղեցին, բայց և իրանց առաջադիմութեամբ պատճառ կը լինեն Վրաստանի մեր վրացախօս հայերի գործին աւելի դանդաղ առաջ գնալուն։ Այստեղ, որտեղ ես վարժապետի պաշտօնն եմ վարում, ինձ զարմացրեց այն հանգամանքը, թէ շատերը զիւղացիներից, որոնց ես երկար ժամանակ վրացիների տեղ էի ընդունում, իսկապէս հայեր են, որք իրանց մայրենի լեզու չը գիտեն, միշտ վրացերէն են խօսում, յանախում են վրաց եկեղեցի և վրացիներից ոչնչով չեն զանազանվում..

Ես չեմ ձանձրացնի ձեզ իմ երկար խօսակցութեամբ, կասեմ ձեզ միայն թէ ինչ պատճառով վրաց լեզուով աւետարանի թարգմանութիւնը շարժեց իմ մէջ մաղձոտ զգացմունքը։

Բոլոր գրքերը, որք ստացվում էին այստեղի ուսումնարանի մէջ աւելի կամ պակաս նպատակայարմար էին թէ ժողովրդական, թէ մանկական ընթերցանութեան համար, շատ անգամ և բոլորովին անմատչելի էին յայտնվում։ Բայց աւետարանը, այդ դարեոր գործը, որի ճշմարտութիւնները միշտ նոր են մնում, այդ աշխատանքը որ ճուլված է ժողովրդական հասկացողութեան համեմատ ձևի մէջ, որովհետև դէպի ժողովուրդն էին ուղղված Մեծ Վարդապետի խօսքերը, ժողովուրդի, ամբոխի մասին էր հոգում Նա, ժողովրդի պահանջներ էր աշխատում լցուցանել, նրան դաստիարակել իր ամենքին մատչելի, ամենհասկանալի ըմբռնելի լեզուով և ոճով,—աւետարանը այն հրաշալի գիրքն է, որ կարող է կարդացած լինել թէ ծերերից թէ երիտասարդներից, թէ ընտանիքում և թէ ուսումնարանում։ Եւ եթէ մի անգամ աւետարանը կը թարգմանվի այն կովկասեան հայոց բարբառով, որով մենք ամենքս խօսում ենք,—այն ժամանակ կը կատարվի իմ տենչանքս՝ հարստացնել մեր զիւղական ժողովրդական դպրոցի գրադարանը այդ անմահ գրքով։

Քանի մի օր օրանից առաջ Բ... եկաւ ինձ մօտ գանգատվելով թէ աւետարանի վրացերէն նոր թարգմանութիւնը կարդալուց յետոյ, նա համոզվեցաւ որ այն լեզուն, որով թարգմանված է այդ գիրքը, այն հեշտ, հասկանալի, խօսեցած, և ժողովրդական վրացերէնը չէ, որով խօսում է ժողովուրդը, և ցաւելով աւելացրեց որ դեռ երկար ժամանակ նա կարողութիւն չի ունենայ տալ այդ գիրքը մանուկների ձեռքը, որովհետև թարգմանութեան մէջ գործածած վերացական լեզուն նրանց անմատչելի է։ Ցնծելով վրացիների կողմից այդ արած սխալը, գոնէ մենք երբ ձեռք տալու լինենք հայերէն լեզուով աւետարանի թարգմանութեանը, չընկնենք նոյն սխալի մէջ։ Օգուտ քաղենք այդ արած փորձից, և չը կրկնենք նոյն սխալը այն ձեռնարկութեան իրագործելու ժամանակ, որի մէջ ուրիշները մեզ արդէն գերազանցեցին։

Տ.... եանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սրբազան Գաբրիէլ արքեպիսկոպոսը, որ զբաղեցած էր Ս. Էջմիածին, կիրակի յունիսի 27-ին կրկին Թիֆլիս վերադարձաւ։

Յունիսի 16-ին Թիֆլիսի նահանգական դատարանի քրէական բաժնում քննվեցաւ Ս. Սանսովի գործը։ Պարոնը գործակատար էր Գ. Աբուլովի խանութում և երբ որ դուրս եկաւ այդ խանութից, խանութատէրը սկսեց մեղադրել նրան գողութեան մէջ։ Բացի սորանից նա Սանսովից պահանջում էր երկու հազար ռուբլ, իբրև թէ վնաս էր կրել այդ գումարը Սանսովի գործակատարութեան ժամանակ։ Դատարանը արդարացրեց Սանսովին գողութեան մեղադրանքից, և Գ. Աբուլովի պահանջը անկատար թողեց։ Այդ դատը մեզ բաւական պարզ ներկայացնում է Թիֆլիսի գործակատարների անմխիթար դրութիւնը և խանութատէրերի վարմունքը նրանց հետ։ Մենք յիշեցնում ենք մեր ընթերցողներին «Մշակի» մէջ տպված յօդուածները մեր գործակատարների անմխիթար դրութեան մասին։ Քանի որ գործակատարը մի տիրոջ մօտ է,—խանութատէրը նրան համարում է օրինաւոր և ազնիւ։ Բայց հէնց որ նա դուրս եկաւ նրա խանութից, թողեց նրա մօտ ծառայութիւնը,—իսկոյն խանութատէրը աշխատում է հռչակել նրան ամբողջ քաղաքում որպէս անհոգ, ծոյլ, շռայլ, գող, անազնիւ, աւազակ... և այսպիսով նրա հացը կտրում է և արգելում նրան կեանքի ճանապարհը։ Այդ տեսակ դրութիւնից դուրս գալու համար մէկ միջոց կայ միայն՝ այն է գործակատարների միմեանց փոխադարձ բարոյական և նիւթական օգնութիւնը հարստահարող և ճնշող խանութատէրերից։

Վրաց «Դրօէբա» լրագիրը լսել է որ եկող տարի կը հրատարակվի ԹԻՖԼԻՍՈՒՄ մի նոր վրացերէն շաբաթական լրագիր։ Խմբագրութիւնը յանձն է առնում պ. Իլիա Չավչավաձէ, իսկ աշխատակիցները կը լինեն Ս. Պետերբուրգի վրաց լեզուի պրիվատ դոցէնտ պ. Յազարէլի, Օդէսայի համալսարանի քիմիայի դոցէնտ պ. Պետրաշվիլի, Բութայիսի կալուածական բանկի կառավարիչ Վ. Գօգոբերիձէ, պ. պ. Բանանով, Գոգեբաշվիլի, Ջափարիձէ, Ջքօտուա և այլն։ Ասում են որ լրագիրը նիւթապէս էլ ապահոված կը լինի՝ նա ունի հինգ հազար ռուբլ հիմնական դրամագլուխ և յոյս ունի ուրիշ աղբիւրների վրա։ «Դրօէբա» լրագիրը ողջունում է նոր լրագրի երևալը, բայց կասկածներ է յայտնում նրա աջողվելու վրա։ Նա բացատրում է թէ ինչ էր այդ նոր գրական ձեռնարկութեան երևան գալու շարժառիթը։ Պ. պ. Չավչավաձէ և Գօգոբերիձէ, որք «Դրօէբայի» աշխատակիցներ էին, մի քանի ժամանակ սրանից առաջ յայտնել են վրաց լրագրի խմբագրին որ շարունակելու են աշխատակցել «Դրօէբային» միայն մի պայմանով, այն է եթէ այդ լրագրի աշխատակիցները Ն. Նիկոլաձէ և Ակակի Ծերեթէլի դուրս գան խմբագրութենից։ «Դրօէբայի» խմբագիրը չէ համաձայնվել զրկվել իր երկու աշխատակիցներից և այժմ Չավչավաձէ և Գօգոբերիձէ պարոնները իրանց սեփական թերթ են հիմնում, և աշխատում են նիւթապէս էլ ապահովացնել նրան։

Շնորհակալութեամբ ստացանք պ. Աւետիք Արաքելեանցից նրա թարգմանված մի փոքրիկ գրքոյկ որ նորերումս ԹԻՖԼԻՍՈՒՄ տպվեցաւ։ Գաբրիէլ Բօկի «Գործնական խրատներ» են։ Հեղինակը ցոյց է տալիս իր գրվածքի մէջ հիմնվելով գործնական մանկավարժութեան, բժշկութեան և առողջապահութեան վրա, թէ ինչպէս պէտք է վարվել երեխաների մտաւոր և ֆիզիկական կրթութեան վերաբերութեամբ տանը և ուսումնարանում։ Ցանկալի է որ այդ տեսակ օգտաւէտ գրքերը աւելի թարգմանվին։ Այդ տեսակ գրական գիտութեան վրա հիմնված մտքերը մեզ հարկաւոր են և աւելի կրթողական նշանակութիւն կունենան մեզ համար, քան թէ խակ, մութ, անմարսելի՝ ինքնուրոյն անուանված մանկավարժական գրվածները։ Ափսոս միայն որ թէ տեխնիկական տերմինների, թէ լեզուի կողմից շատ պակասութիւններ կան գրքի մէջ։ Գիրքը տպված է մեծ առատախաչերով։—Թիֆլիս. Յովհաննէս Մարտիրոսեանի տպարան. 1876 թիւ։ Գինը 30 կոպէկ է։

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են՝ «Արդէն ձեր լրագրի ընթերցողներին յայտնի է քաղաքիս առաջնորդ արք. Պարղեանի տուած այն քարոզը, որով նա արգելում էր խպաւ և ծանր բանադրանքի էր ենթարկում այրի մարդկանց ամուսնութիւնը օրիորդների հետ։ Քահանաներից մինը համոզված լինելով որ այսպիսի տարօրինակ՝ ոչ ներկայ ժամանակի ոգու հետ հերդաշնակ, ոչ հոգևոր բարձր վարչութենից հրամանագրված, ոչ մարդկային աղտտ իրաւունքների վրա հիմնված, ոչ էլ վերջապէս մեր եկեղեցու օրէնքներին համեմատ հրամանը երբէք չէ կարող իրագործվել,—անտես է առնում առաջնորդի քարոզը և միջնորդ է լինում մի այրի պարոնի մի օրիորդի հետ նշանվելու։ Մի քանի օրից յետոյ յիշեալ քահանան առաջնորդի հրամանով զրկվում է քահանայագործութեան իրաւունքից։ Տէր-հայրը մի քանի ժամանակ համբերեց առանց նիւթական միջոցների և եկեղեցական աղբիւրների ապրելու տանջանքը,—բայց վերջապէս յուսահատվեցաւ, մանաւանդ ոչինչ պատասխան չը ստանալով իր դանդատին Ս. Սինոդից, և ստիպվեցաւ կրկին գնալ առաջնորդի մօտ, նրա ոտները ընկնել և ներողութիւն խնդրել։ Յաւալի է երբ համոզմունքի պահպանելը կամ չը պահպանելը կախված է հացի խնդրից....»

Յուլիսի 4-ին ԹԻՖԼԻՍԻ դումայի դահլիճում կայացաւ Թիֆլիսական արվեստաւորների ընկերութեան ընդհանուր ժողովը։ Մամուժողովը որ հաւաքեց ընդհանուր ժողովը կայացած էր պ. պ. Լուցէնկո, կապանաձէ, Դէօրզօբիանի, Բագատուրով, Զօմմէր արվեստաւորներից և հետեւալ պարոններից՝ իշխան Մ. Բէհբութեանց (Ինժէնէր), իշխան Կ. Բէհբութեանց (Տոֆտ. Բեստ. խմբագիր) Ս. Մէսխի (Դրօէբայի խմբագիր) և Գ. Արծրունի (Մշակի խմբագիր)։ Ընդհանուր ժողովի նախագահ ընտրվեցաւ Գ. Արծրունի։ Ընտրվեցան տասն-երկու տատրշինաներ և տասն-երկու կանդիդատներ, որոնց անունները, տեղի պակասութեան պատճառով, մի այլ անգամ կը յայտնենք։

ԹԻՖԼԻՍԻ հայոց Կոնսիստորիան խնդրում է մեզ տպել հետեւեալ ծանուցումը՝ «Վիճակիս առաջնորդ գերապատիւ Գաբրիէլ արքեպիսկոպոսը գործի պատճառով իրան եկողներին ընդունում է՝ երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը, առաւօտեան 10 ժամից մինչև 12 կէսօրն։»

ԿԱԽ զիւղից մեզ գրում են յուլիսի 1-ից՝ «Բանի օր է որ անընդհատ անձրևներ են դալիս այստեղ։ Գետերը մեծացել են։—Լսում ենք որ մօտակայ զիւղերի շրջականերում աւազակների խմբեր են յայտնվել և թալանում են ճանապարհորդներին։ Եթէ պ. Շօլկօվնիկով այստեղ կը լինէր, այդ տեսակ անցքերը չէին պատահի։»

«Դրօէբա» վրաց լրագրին գրում են ՔԻԶԻԽ զիւղից, թէ շաբաթ չէ անցնում, որ լեզգիները մարդ չը սպանեն։ Բոլոր զիւղը երկիւղի և դողի մէջ է։

Գօրուց ոչ հեռու գտնվող ՏԻՐԳՆԻ զիւղից զբրում են «Դրօէբա» լրագրին որ այդ զիւղի ուղղափառ եկեղեցու մի տիրացու նորերումս հրացանով սպանել է այդտեղի քահանային։ Պատճառը այն է եղել որ այդ քահանան և բարեկարգիչը երկու տարի շարունակ տիրացուին չէին տալիս հաւաքած փողից նորան պատկանած մասը, նրա հետ սաստիկ թշնամի լինելով։ Իսկ մէկ շաբաթ սպանութենից առաջ բոլորովին զրկել էին տիրացուին ապրուստի ամեն միջոցներից, դուրս անելով նրան եկեղեցու մէջ ծառայութենից։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԵՐԲԻԱ

Սերբական զօրքը թէև շատ դանդաղ, բայց այնու ամենայնիւ միշտ առաջ է գնում պատերազմի մէջ Թիւրքիայի դէմ։ Յունիսի 22-ին սերբական գեներալ Սարատիմիրովիչ յաղթեց Թիւրքերին Ակպալանքի մօտ։ Այդ կողմերի պատմագիները նոյնպէս ապստամբվեցան։ Յունիսի 24-ին սերբական զօրքերը Տիմոկի վրա անցան և գնում են դէպի Վիդդին։ Թուրքերը յարձակվում են պատմական զօրքերի վրա, բայց անդադար անաջողութիւններ ունեն։ Յունիսի 26-ին Բատարնիցի մօտ 6 ժամվայ ճակատամարտից յետոյ թուրքերը յետ քաշվեցան։ Յունիսի 27-ին Բանկոնիկի սերբական զօրապետը 6 ժամվայ ճակատամարտից յետոյ վեր առաւ Բէլինա ամրոցը։ Թիւրքայ զօրքից սպանվեցան 700 մարդ։ Սերբիացիները կորցրին 150 մարդ։ Գեներալ Չերնիաէվ հաղորդում է „Русскій Міръ“ լրագրին, որ Աւստրիան գաղտնի կերպով օգնում է Թիւրքայ զօրքին իր գնուորականներ ուղարկելով Թուրքերին։ Աւստրիացիները և Ունգարացիները, պատմական ցեղերի այդ անհաշտ դարաւոր թշնամիները, Թուրք գնուորականների շորերը հագած, պատերազմում են մահմեդականների զօրքի շարքերում քրիստոնեաների դէմ։ Ասում են որ Աւստրիայից ուղարկվեցան 700 մարդ հմուտ գնուորականներ որք ընդունվեցան Թուրք զօրքի մէջ։ Բէլինայի ճակատամարտի մէջ Թուրքերի զօրքի մէջ լսվում էին հրամաններ գերմաներէն և ունգարերէն լեզուով։—Թէ Զերնոզօրիայի իշխան Նիկոլայոս, թէ Սերբիայի իշխան Միլան Թիւրքիայի դէմ պատերազմ սկսելուց առաջ յայտնեցին իրանց հրովարտակների մէջ, թէ պատերազմելու են ոչ թէ մահմեդականութեան դէմ, այլ Թիւրքայ տերութեան դէմ, այնպէս որ թէ Բոսնիայի, թէ Հերցեգովինայի այն սլավոնացիներին, որք մահմեդականութիւնը ընդունած են, ոչինչ վնաս չի դիպչի։ Նոքա Թիւրքայ բռնաւորութենից ազատվելուց յետոյ, պէտք է սերբական օրէնքների առաջ հաւասար իրաւունքներ վայելեն քրիստոնեաների պէս և նրանց կրօնքը յարգված կը լինի ինչպէս և քրիստոնէական կրօնքը։

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ

Յունիսի 25-ին

Պօնտոսի սարերում մի հայ, Սարգիս Գալֆայեան անունով և մի իտալացի Թուրքերի ձեռքով սպանվեցան։ Ասում են որ հայը ռուս հպատակ է եղել։ Նոյնպէս մի յոյն քահանայի գլուխը Թուրքերը կտրել են։—Թիւրքիայի քրիստոնեաների վիճակը շատ աննախանձելի է՝ ինչ ասես բարբարոսութիւններ են գործում Թուրքերը։ Նորերումս ապրստամբված գաւառներում մի յունադաւան քահանային Թուրքերը խաչելութեան տանջանքին են ենթարկել։ Բոլգարիայի մի գիւղում Թուրք զինուորականները մտել են բոլորը այրելով, սպանելով, ոչնչացնելով։ Մի հարուստ ծերացած գիւղացու տունը մտնելով, կապել են նրան ձեռքերից ու ոտներից և նրա ներկայութեամբ հերթով բռնաբարել են նրա 15 տարեկան աղջկան։ Աղջիկը չը կարողացաւ տանջանքը և ամօթը տանել և քանի մի ժամից յետոյ մեռաւ։—Եթէ եւրոպական գաւառներում այդ տեսակ զզվելի բարբարոսութիւններ են գործվում, էլ ինչ կարելի է երևակայել իրան Փոքր-Ասիայի խորքերում կատարված գազանութիւնների մասին։ Ասում են թէ հայը այնտեղ էլ մարդ չէ համարվում,—այլ գրաստ է։ Ականատեսները պատմում են թէ Վանի կամ Փոքր-Ասիայի այլ մի քաղաքի մէջ երբ մի Թուրք զինուորական փողոցով անցնելով պատահում է մի հային, նա կարող է նրան խփել, զարկել թէ ձեռքով, թէ զէնքով՝ հայը ոչինչ չէ պատասխանում։ Եթէ հային հարցնես՝ ինչպէս ես համբերում այդ տեսակ վիրաւորանքները,—հայը պատասխանում է՝ ինչպէս կարող եմ խօսք ասել, ախար դա տէրութեան զինուոր է... Այդ ստրկութեան վերին աստիճան է, այդ ոչ թէ միջնադարեան ստրկութիւն է, այլ Զինգիսխանի ժամանակներ է յիշեցնում։ Ինչ որ Բոսնիայում, Բոլգարիայում կամ Հերցեգովինայում է պատահում, այդ մենք լսում ենք, կարդում ենք։ Բայց Փոքր-Ասիայում, Հայաստանի մէջ ոչ օտարներ կան, ոչ էլ լրագրութեան թղթակիցներ, որք կարող էին ամեն մի անցքի վրա իսկոյն տեղեկութիւն տալ կրթված աշխարհին։ Եթէ Թուրք զինուորները կամ մոլեռանդ ամբոխը աջ ու ձախ հայերին սպանէին էլ,—այդ մասին ոչ ոք չէր իմանայ։—Նորերումս Կ. Պոլսի մի նշանաւոր հայ փաստաբան (ադվոկատ) մի դատաստանական գործ պաշտպանելիս է լինում և իր ճառի մէջ յիշում է դատաւորների և վարչութեան կողմից արած օրէնքների մի քանի զեղծումներ, ասելով թէ՝ «այդ սնիրաւութիւնները գործվում են այն ժամանակ, երբ կայսերական վերջին աղատական հրովարտակի թանաքը դեռ չէ չորացած...» Այդ խօսքերի պատճառով փաստաբանը կառավարութեան հրամանով կալանաւորվեցաւ։ Ահա սորանից կիմացվի թէ սուլթանի աղատական հրովարտակները ինչ արժէք ունեն Թիւրքայ պաշտօնեաների համար։—Լրագիրներում կարդացած կը լինէք որ Օդեան Գրիգոր էֆէնդին և Աբրահամ փաշան հասել են Ֆրանսիա, որի տերութեան մօտ նրանք ուղարկված են եղել Միդհադ փաշայից քաղաքական յանձնարարութեամբ։—Երիտասարդ Թիւրքիա անուանված կուսակցութիւնը որ յեղափոխութիւն գործեց, այժմ հետզհետէ իր ազդեցութիւնը կորցնում է և հին անուանված կուսակցութիւնը սկսում է կրկին աւելի և աւելի նշանակութիւն ստանալ։ Միդհադ փաշան վտանգի մէջն է իր պաշտօնը կորցնելու։ Արևելեան ժողովուրդը, ինչպէս ամեն տգէտ ժողովուրդ, ամեն նոր մարդից հրաշքներ է սպասում։ Մուրադ սուլթանի կառավարութիւնը չը կարողացաւ այդ հրաշքը գործել, չը կարողացաւ մի քանի օրվայ մէջ ոչնչացնել ապստամբութիւնը, խաղաղացնել Թիւրքիայի խառն դրութիւնը,—և այժմ նա արդէն իր հեղինակութիւնը կորցնում է ժողովրդի աչքում։ Սուլթանի պալատը անմատչելի է ժողովրդին և պատած է զօրքերով։ Շատերը կալանաւորվում են Կ. Պոլսում տերութեան հրամանով։ Ուրեմն ահա ինչպէս սկսվում է աղատամիտ սուլթանի թագաւորութիւնը....

* * *

ՆԱՄԱԿ ԷՐԶՐՈՒՄԻՑ

Յունիսի 20-ին

Հայերի մասին խօսելով, մենք միշտ լսում ենք հետեւեալ խօսքը՝ թէ հայերը պինդ են իրանց

կրօնքի պահպանութեան մէջ։ Յաւելով տեսնում ենք որ այդ բոլորովին սխալ կարծիք է։ Ամբողջ ասիական Տաճկաստանի մէջ ցրված կը տեսնէք Թուրք գիւղեր, որք օտար ճանապարհորդի աչքում Թուրք են երևում, բայց իսկապէս մահմետականացած հայեր են։ Մահմետականութիւնը ընդունած հայերը այնքան շատ են, որ Փոքր-Ասիայի մի քանի գաւառներում, ինչպէս օրինակ Երզնկայի կողմը, բուն տաճիկ բոլորովին չը կայ, բոլոր գիւղերը մահմետական դարձած հայեր են։ Նրանց գիւղը որ մտնէք, ոչ մի հայ չէք պատահի նրանց մէջ, բայց լաւ հետազօտեցէք նրանց տիպը, նրանց ընտանեկան կեանքը, նրանց հասարակական կեանքի եղանակը,—և կը համոզվէք որ նրանք բուն հայեր են։ Ուշադրութիւն դարձրէք այդ երկրագործ ժողովրդի խօսակցութեանը, և կը լսէք որ ընտանեկան, հասարակական, բայց մանաւանդ երկրագործական բոլոր հիմնական տերմինների, դաշտային պարապմունքների, ջրանցքերի, վառ ու ցանքի, բոյսերի, երկրագործական գործիքների անունները՝ բոլորը հայերէն անուններ են։ Մտէք Թուրքի շորով նրանց գիւղերը, հետևեցէք նրանց կեանքին,—և կը տեսնէք որ այդ մահմետականները իրանց աղօթքը, նամազը կատարելուց յետոյ, անցնելով մի հին, քանդված եկեղեցու աւերակի մօտ, երկրպագում են խաչին։ Եւ այդ տեսակ գիւղերը բազմաթիւ են ամբողջ Փոքր-Ասիայում։ Հայութիւնը այդպիսով հետզհետէ անհետանում է մահմետականութիւնն ընդունելով։ Ինչ է անում մեր հոգևորականութիւնը, աշխատում է արդեօք նրանց դարձնել իրանց պապերի կրօնքին,—ոչ, նա անտարբեր է։ Եւ դարձեալ մենք միշտ կրկնում ենք թէ մեր հոգևորականութիւնը ազգութեան միակ պաշտպան է.... Յայտնի է որ թափառական քիւրդ ցեղերից շատերը շատ բարեկամ են հայերին։ Քիւրդը որ դաւանում է մի կրօնք, որ խառնուրդ է ներկայացնում քրիստոնէութեան, մահմետականութեան, և կռապաշտութեան, շատ աւելի բարեկամ է հայերին, քան թէ մահմետականներին։ Երկնակայ չրջապատող բարձր, անառիկ սարերում, որտեղ բնակվում են քիւրդերը, ոչ մի Թուրք երբէք չէ մտել. տէրութեան պաշտօնեաները մինչև անգամ հայերի միջնորդութեամբ յարաբերութիւններ են պահպանում այդ լեռնաբնակ ժողովրդի հետ։ Հայերը ազատ չրջանում են նրանց գիւղերում։ Կիրակի օրերը, երբ քիւրդերը սարերից իջնում են քաղաքը, իրանց գիւղական արդիւնքները՝ իւղ կարակ, կաթ, ոչխարներ ծախելու համար, և մնում են քաղաքում հետեւեալ գիշերն անցնելու համար, երբէք մի քիւրդ չի համաձայնվի իջևանել տաճկի տանը, այլ միշտ նրանք հիւրասիրվում են հայերից։ Այդ կողմերը քանի մի տարի առաջ հայերը սկսեցին աղգականութեան կապեր կապել քիւրդերի հետ, սկսեցին նոցա իրանց աղջիկներ տալ և իրանք նրանցից վերցրած աղջկերանց հետ պսակվել։ Հայ հոգևորականութիւնը այդ իմանալով խրատութեամբ և բանադրանք սպառնալով հայերին, արգելել է նրանց ընտանեկան յարաբերութիւններ կապել քիւրդերի հետ։ Եթէ այդ յարաբերութիւնները չարգելվէին և չարունակվէին, այդ վերջին երեսուն կամ քսան տարվայ մէջ բոլոր քիւրդերը կամաւոր կերպով կը հայանային... Ահա մեր հոգևորականութեան մտաւոր ողորմելի զարգացման, մոլեռանդութեան և քաղաքական անհեռատեսութեան պտուղները։ Գտնէ մեր հոգևորականութիւնը հետեւէր յունադաւան հոգևորականութեան օրինակին։ Էրզրումի նահանգի մի գիւղ, որի անունը չեմ կամենում տալ, նորա բնակիչներին չը վնասելու և տէրութեանը չը մատնելու համար, բնակեցրած է մահմետական դարձած յոյներով։ (Մահմետականացած յոյներն էլ բաւական են Թիւրքիայում)։ Ցիշեալ գիւղը պաշտօնապէս մահմետական էր համարվում ահա 20 տարից աւելի։ Նա ունի իր մահմետական աղօթատուն, մզկիթ, մոլլայ,—բայց գիւղացիների տներից մինի տակ, գետնի մէջ փորված է մի եկեղեցի, որտեղ կիրակի օրերը հաւաքվում են գիւղացիները, և նոյն մոլլան, հանելով իր գլխից սպիտակ պատրոցը, քրիստոնէական ժամասացութիւն է ասում գիւղացիների առաջ։ Դուրսը նրանք մահմետական են, իսկ իրանց նոր ծնված երեխաներին մկրտում են գետնի տակ փորված եկեղեցում, պսակվում են քրիստոնէական դաւանութեան արարողութիւններին համեմատ։—Աւաղակ քիւրդը, ճանապարհին կողոպտելուց յետոյ իր գիւղը վերադառնալով և վերցրած աւարը իր հետ տուն բերելով, բարձրանում է մի որ և է սարի վրա, որտեղ մի հին մատուռ կամ քարեայ խաչ է կանգնած, և չոքելով աղօթք է անում, աստուծուն փառք տալով իր ունեցած աջողութեան համար։—Տաճիկները չունեն ուսումնարաններ, մեծ մասամբ գիր չը գիտեն, նոքա իրանց լեզու համարում են ոչ թէ իրանց հայրենիքի քաղաքական լեզու, այլ կրօնական լեզու։ Տաճիկը խօսում է Թուրքերէն, որովհետև մահմետական է, նա գիտէ թէ եթէ կրօնքը փոխէ, եթէ քրիստոնէութիւնն ընդունէ, պէտք է սկսէ հայերէն խօսել։ Տաճկաց ամբոխի մէջ իզուր կը պառէք հայրենիքի կամ ազգութեան գաղափարը։ Նա ճանաչում է միայն իսլամի, ուրեմն կրօնքի գաղափարը։ Նոր սկսել են արվեստական կերպով մուտք գործել հայրենիք և ազգութիւն խօսքերը Թիւրքիայում, երիտասարդ-Թիւրքիա կուսակցութեան ջանքերով։ Բայց այդ խօսքերը մնում են խօսքեր, և չեն մարմնանում ամբոխի գաղափարի մէջ։ Սուլթան Մուրադ V-ի դահը նստելուց յետոյ, Փոքր-Ասիայի քանի մի քաղաքներում հրամայած էր տօնախմբութեան ժամանակ թէ զօրքին, թէ պաշտօնեաներին աղաղակել՝ «կեցցէ՛ հայրենիք» խօսքը։ Բայց այդ խօսքը արձագանք չէ գտնում մահմետական ամբոխի մէջ, նա հայրենիք չունի, նա հողի հետ կապված չէ։ Թուրքը անպիտան երկրագործ է, նա 500 տարի շարունակ Հայաստանում զետեղված լինելով, չէ սիրել հողը, չէ կապվել նրա հետ, նա պատրաստ է այժմս էլ թողնել իր բնակած երկիրը և գնալ հեռու աշխարհներ՝ կոտորել, այրել, սպանել մահմետականութեան անունով։ Եթէ մահմետականների մէջ կան լաւ երկրագործներ, այդ միայն Թուրք անուանված, քրիստոնէութիւնը թողած և մահմետականութիւնը ընդունած հայեր են։ Թուրք ամբոխի համար անմատչելի է հայրենիք խօսքը, նա կարող է միայն յափշտակվել, դրդված լինել դէպի մի որ և է շարժում «կեցցէ՛ Իսլամ» խօսքի միջոցով....

Ն.

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Յունիսի 20-ին, կիրակի օրը, երեկոյեան ժամը 5-ին Թիֆլիսի Հաւլաբար անուանված թաղում, սուրբ Մինաս եկեղեցու մօտ գտնված հրապարակով անցնում էր մի քարտաչ հայ երիտասարդ, մէջքին չալակած վարօղ մօտ 5 ֆունտ։ Նրան տեսնելով այնտեղ գտնված երեխաները իսկոյն վազում են նրա ետևից, սկսում են քաշքշել նրա շորերի ծայրերից, պահանջելով որ վառօղ տայ նրանց։ Այդ ժամանակ վառօղը թափվեցաւ։ Երեխաները սկսեցին հաւաքել։ Յանկարծ մի պապերոս ընկաւ գետնի վրա, կրակը դիպաւ այրվող նիւթին և վառօղը բորբոքվեց։ Ներկայ գտնվողներից ոմանք այնպէս այրվեցան որ միւս օրը մեռան։ Թէ այրվածների թէ վերքեր ստացածների թիւը 12-ի է հասնում։

* * *

Թիւրքիայի նախկին սուլթան Աբդիւլ-Ազիզի պալատական տարեկան ծախսը հասնում էր 1,801,980 օսմանեան ոսկին։ Պալատում կային 4800 սպասաւորներ, իսկ հարեմի մէջ 800 կին էր գտնվում։

* * *

Այսօր «Մշակի» բաժանորդների թիւը հասաւ 560-ի։ Մեր բաժանորդների թւում ոչ ոք չը կայ մեր զօրքի հայազգի երիտասարդ օֆիցէրներից կամ իւնկերներից։ Նոքա, թէև շատ լաւ էլ գիտենային հայերէն, ոչ թէ միայն չեն գրվում «Մշակին» բայց մենք նկատել ենք, որ նրանք ամաչում են մինչև անգամ վերցնել իրանց ձեռքը մի որ և է հայ լրագիր, որ չերևայ թէ հայերէն գիտեն։ Սիմէք մայրենի լեզուով լրագիր կարդալը կարող է կասկածելի անել նրանց որպէս հաւատարիմ զինուորական ծառայողներ։ Ցաւալի է որ մենք դեռ չենք հասել քաղաքական մտաւոր զարգացման այն աստիճանին, որ հասկանանք թէ կարելի է լեզուով և ազգութեամբ հայ լինել և միևնոյն ժամանակ ռուս պետութեան հաւատարիմ քաղաքացի։ Եթէ պետութեան հաւատարիմ հպատակ լինելով, ես իմ աղօթքը կարող եմ իմ մայրենի լեզուով ասել, ինչի մտաւոր զարգացմանը չեմ կարող իմ մայրենի լեզուով նպաստել, այնուամենայնիւ ամբողջ պետութեան օգտաւէտ և հաւատարիմ քաղաքացի մնալով։ Կը համարձակվենք խորհուրդ տալ մեր զինուորականներին գոնէ «Մշակի» վերջին համարների Փոքր-Ասիայի վերաբերութեամբ յօդվածները կարդալու։ Գուցէ նրանք կարող էին մեր յարուցած հարցի մշակելուն օգնել իրանց խորհրդածութիւններով զինուորական գիտութեան և ստրատեգիական կէտից պարզելով խնդիրը....

* * *

Վրաց «Դրօէբա» լրագրին գրում են ՓՕԹԻՒՑ թէ այդտեղի աղջիկները և կանայքը պայման են կապել իրանց մէջ, որ լօտօ խաղացողներից փող առնողը մի նշանակված գումար պէտք է զոհէ բարեգործական նպատակի համար. այսպիսով յոյս կայ որ ժամանակով մեծ գումար կը հաւաքվի, եթէ այդ պայմանը պահպանվի։

* * *

Այս տարվայ պէս աջող բերք ահա քսան տարի է որ Մինգրէլիայում տեսած չեն։ Խաղողի վրա թող ամենևին չէ երևում։ Եթէ ամառը մինչև վերջը այսպէս չարունակվի, յոյս կայ որ այս տարի գինին մեծ քանակութեամբ կը ստացվի։

* * *

Այս րոպէիս ստացանք պ. Աբդար Յ'ովհաննիսեանից խմբագրված «ՓՈՐՁ» եռամսեայ հանդիսի առաջին համարը։ Արտաքին վայելուչ տեսքը և նիւթերի բաղմատեսակ լինելը մեզ վրա մի շատ գեղեցիկ տպաւորութիւն գործեցին։ Մենք դեռ գտնվում ենք առաջին տպաւորութեան տակ։ Սիրով ողջունում ենք այդ հայոց նոր գրական ձեռնարկութեան երևալը։ Մենք յետոյ կը խօսենք աւելի մանրամասնաբար։ Գուցէ, մենք կը տարբերվենք ողղութիւնների մէջ, բայց այդ մեզ չի արգելի ցանկանալ պ. Ա. Յովհաննիսեանի ձեռնարկութեանը երկար կեանք։

* * *

ՍԽԱԼ։ «Մշակի» № 23-ում տպված Գանձակի նամակի մէջ մեր Թղթակիցը յիշում է Գրիգոր վարդապետի Տէր-Աւետիքեանին։ Որքան մեզ յայտնի է այդ ազգանունով Սինոդի անդամ չը կայ, այլ կայ Գրիգոր վարդապետ Տէր-Մատթէոսեան, որ այժմ Թիֆլիսումն է։

Խմբ.

ԶԱՔԱԹԱԼԻ հրդեհից վնասվածների համար ստորագրութիւնը շարունակվում է։ Մենք այդ նպատակի համար ստացանք մի նուիրատուութիւն, որ խնդրեցին մեզ տպագրել ռուսերէն լեզուով Отъ безсрочно-отпускнаго Качавкина, служащаго въ Павиліонѣ Шенинга получено штрафныхъ въ пользу Закатальск. погорѣлыхъ 10 рублей։ Անցեալ 8 բուբլու հետ միասին կունենանք 18 բուբլ։

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ արվեստաւորների ընկերութիւնը որոնում է մի յարմար ԲՆԱԿԱՐԱՆ, քաղաքի կենտրօնում։ Բնակարանների տէրերը կարող են յայտնել իրանց պայմանները պ. ԼԱԿՍԻՆԻ խանութը, կամ „ՄՇԱԿԻ“ խմբագրատանը, կամ պ. Գրէգուար ԳԻՕՐԳՕԲԻԱՆԻ խանութը։

Դուրս եկաւ մամուլի տակից բժիշկ Բօկի շարադրութիւնը „Գործնական խրատներ երեխաների մտաւորական և ֆիզիքական կրթութեան համար“ Թարգմանութիւն Ա. Արասխանեանցի։ Գինն է 30 կոպէկ. Ծախվում է Թիֆլիսում պ. Գրիգորեանցի և ընկ. գրավաճառանոցում, ուր և կարող են դիմել ցանկացողքը։ 1 (2)

ՄԱՆԳԼԻՍՈՒՄ առաջարկում են ԴԱՍԵՐ՝ մուզիկայի, զանազան առարկաների, և նոր լեզուների, նամանաւանդ հայոց։ Պատրաստում են երեխայոց ամենայն միջնակարգ ուսումնարանների համար, թէ օրիորդական և թէ տղայոց։

Հասցէն Մանգլիսում՝ կօնտավլօվի տուն, բօշչայի դէմուդէմ։

4 (4)

Ժամանակաւոր վարչութիւնը ՄՕՍԿՎԱՅԻ կրակի դէմ ապահովութեան Թիֆլիսեան ագէնտութեան և կրակի դէմ ապահովութեան կենտրօնական „Волга“ անունով զորձակատարութեան, ես յանձնումեմ պետական ծառայութենից հրաժարականը տուած մայօր Նիկողայոս Աւետիսեան Պապօվին, որ ընդունում է ապահովութիւնները Գանօվսկի փողոցում, Յովհաննիսեանի տանը գտնվող գրասենեակում։

1 (1) Ագէնտ Լ. Էլիմիրզով

ԹԻՖԼԻՍԻ ԻԳԱԿԱՆ ԳԻՄՆԱԶԻԱՅԻ ութերորդ դասատան մի ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ կամենում է ԴԱՍԵՐ տալ։ Հարցնել „Մշակի“ խմբագրատան մէջ։

Воспитанница восьмаго класса *Тифлисской* ЖЕНСКОЙ ГИМНАЗІИ желаетъ давать уроки. Адресъ можно узнать въ редакціи „Мшакъ“

1 (5)

ԱՄԵՆԱՀԱՍՏԱՏ ՄԻՋՈՑ

ՓՈՔՐ ԵՒ ՄԵԾ ՄԿՆԵՐ, ԽԼՈՒՐԴՆԵՐ ԵՒ ՄԻՋԱՏՆԵՐ ՈՉՆՉԱՑՆԵԼՈՒ։ ԲԻՍ ԴՈՒՏՄԱՆ ՔԻՄԻՔՈՍ ՊԷՇՏԻՑ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՏԱՆ ՀԱՅԹԱՅԹԻՉ

Որ մի քանի արտասահմանեան պատուանշաններից արտօնութիւններ ունի։

Պատիւ ունեմ առաջարկել թէ հասակութեանը, թէ պ. պ. վաճառականներին ինձանից հնարած ամենանոր և մեծ ներգործութիւն ունեցող միջոցներ՝ մկներ, խլուրդներ և ամեն տեսակ միջատներ, ինչպէս օրինակ սև ուտիճ (տարական) ցեց, մրջիւն, բաղլինջ, լուս և այլն, ոչնչացնելու համար։ Ցիշեալ միջոցները, որք իմ գիւտերն են և ինձանից պատրաստված են, ստացան կատարեալ հաւանութիւն և յայտնի են ամբողջ Եւրոպայում, որի համար և ունեմ վկայագրեր։

Այդ միջոցները արժանացան Մոսկվայի բազմարվեստեան հանդիսում 1872 թ-ին մեծ արծաթեայ մեդալի և Վիէնայի աշխարհահանդիսում 1873 թ. առաջադիմութեան համար մեդալի (Fortschritts—Medaille):

ՀՆԱՐՈՂԸ ԵՐԱՇԽԱՒՈՐ Է ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՍՏԱՏ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ։

Մեծ քանակութեամբ առնողներին զիջումն կը լինի։

ԳՆԵՐԸ՝

Մկների և խլուրդների դէմ դեղը մի սրուակի համար 1 ր. 50 կոպ.։ Փոչին սև ուտիճների, ցեցի մրջիւնների և լուերի դէմ 1 բուբլ։ Սորա հետ հարկաւոր է առնել և զուտապէրչի փոքրիկ մեքենաներ իւրաքանչիւրը 60 կոպ.։

Հեղուկ բաղլինջների դէմ մի սրուակ 1 ր.։

Այդ միջոցը ունի անուշ հոտ, քիծեր չէ անում և յանկարծակի է ներգործում, որի համար երաշխաւոր է գլխաւոր Դէպօ։

Հատատ միջոց ԿՈՇՏԵՐԻ և կաչու կոչտութիւնների դէմ, մի սրուակ 60 կոպ.։

Գլխաւոր դէպօ ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. ԼԱՆԿՕԻ մուզիկային մագազինում, Դվորցովի փողոցում,

Արծրանաս տանը։ ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍՈՒՄ պ. ՍԵԳԱԼԻ մօտ, իսկ ՍՏԱՎՐԱՊՕԼՈՒՄ պ. ԿՈՒՐԻԼՋԵՆԿՕԻ մօտ։

Օտարաքաղաքացիները թող բարեհաճեն ճանապարհի ծախսը վճարել յիշեալ միջոցները ուղարկելու համար։ Կարող են թէ փողով, թէ փոստի մարկաներով։ 23 (50)

Дозволено цензурою 8 Іюля 1876 г. Тифлисъ Типографія Энфіаджіанцъ и К-о Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ